


ՄԵԾ ՏԱՂԱՆԴԻ ՏԵՐ ՀԱՅԱԳԵՏԸ

(Ասատուր Մնացականյանի ծննդյան 110-ամյակի առթիվ)*

Կան մարդիկ, որոնք իրենց կենդանության օրոք հասցնում են կատարել այնպիսի նշանակալի գործեր, որոնց շնորհիվ արժանանում են դառնալու



պատմական արժեք: Այդ անուններից է Ասատուր Մնացականյանը՝ բանաստեղծը, բանասերը, պատմաբանը, արվեստագետը, միջնադարագետ-ձեռագրագետը: Ճակատագրի բերումով նրան էջեր հաջողվել ստանալ իր երազած կրթությունը: Ստալինյան բռնադատության զոհ էր դարձել նրա հայրը՝ Ոսկեվազ գյուղի ամենաաշխատասեր ու հարուստ մարդը: Էջմիածնում միջնակարգ կրթություն ստանալուց հետո Ասատուրը հայտնվում է Թիֆլիսի գյուղատնտեսական ինստիտուտում, որովհետև այնտեղ չգիտեին իր հոր մասին և կարող էր թոշակ ստանալ ու ապրել:

Թիֆլիսի գյուղատնտեսական ինստիտուտն ավարտել է 1939 թ., որից հետո վերադարձել է Երևան ու 1940 թ. աշխատել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ հետագայում դառնալով այդ եզակի ազգային, նաև միջազգային արժեք ունեցող գիտական հաստատության երևելի դեմքերից մեկը:

Ա. Մնացականյանը 1942–1945 թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին, գերի է ընկել Կերչում, հետո տեղափոխվել Ռումինիայի համակենտրոնացման աշխատանքային ճամբար, հրաշքով փրկվել, այնուհետև խորհրդային զորքերի շարքերում վերստին կռվել Ֆալիզմի դեմ «չտուրմոլոյ բոտալոնի» կազմում, որի կռիվներից 10-ից մեկն էր կենդանի մնում: Նրա հետագա կյանքը վերստին կապվում է Մատենադարանի հետ, ուր աշխատեց մինչև կյանքի վերջը՝ 1983 թ.:

Եթե Մնացականյանին համեմատենք հայ միջնադարի մեծերից որևէ մեկի հետ, ապա առավել հարմար է Հովհաննես Սարկավազ Իմաստասերը, որին ժամանակակիցները տվել էին նաև Աշխատասեր պատվանունը:

Ա. Մնացականյանին խիստ պատշաճում է գիտությանն անմնացորդ նվիրյալ տիտղոսը: Նրա համար Հայաստանը, հայ ժողովրդի ճակատագիրը, Հայաստանի գիտական, կենսական առաջընթացը կյանքի իմաստ էր: Դրա վկայությունն են նրա բազմաթիվ գրքերը և նույնքան բազմաքանակ գիտական հոդվածները:

Ա. Մնացականյանի և ակադեմիկոս Լ. Խաչիկյանի ջանքերով լույս տեսան Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց» Ա (1965 թ.) և Բ (1970 թ.) հատորները, որոնք իսկական նվեր էին միջնադարյան հայ մատենագրության տարբեր բնագավառներն ուսումնասիրող մասնագետների հա-

* Ներկայացվել է 13. IV. 2022 թ., ընդունվել է տպագրության 13. V. 2022 թ.:

մար: 1958 թ. նա ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1964-ին՝ պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Քանի որ հինգից ավելի ասպիրանտներ նրա ղեկավարությամբ պաշտպանել էին թեկնածուական ատենախոսություններ, 1973 թ. նրան շնորհվել է նաև պրոֆեսորի կոչում: Մնացականյանը խստապահանջ գիտական ղեկավար էր, ու նրա պատրաստած գիտական կադրերը աչքի ընկնող բանասերներ էին: Դրանց թվում էին Փայլակ Անթաբյանը, Արմինե Քյոշկերյանը, Հրաչյա Թամրազյանը, Էլեոնորա Հարությունյանը, որոնք հրատարակեցին հայ միջնադարին վերաբերող կարևոր աշխատություններ:

Բազմաթիվ թեմատիկ նորություններ գրքերի ձևով հայագետների սեղանին է դրել Մնացականյանը: Նրան ենք պարտական Նաղաշ Հովնաթանի (1951 թ.), Պաղտասար Դպրի (1958 թ.) (համահեղինակ Շուշանիկ Նազարյան) տաղերի քննական բնագրերը տպագրված տեսնելու փաստով: Նա պատրաստել է նաև Գրիգոր Տղայի ողջ ստեղծագործությունների բնագրերը՝ դրանց կցելով համապատասխան սպառիչ առաջաբան ու մանրակրկիտ ծանոթագրություններ: Հետագայում՝ 1983 թ., հրատարակեց Ն. Հովնաթանի տաղերը՝ նորացված առաջաբանով, բառարանով ու հարստացված նորագյուտ տաղերի բնագրերով: Շատ դիպուկ է բանասերը բնութագրել Ն. Հովնաթանի (1661–1722 թթ.) տաղերգության նորարարական բնույթը. «Նաղաշ Հովնաթանի չափածոն ինքնատիպ անակնկալ է իր ժամանակի գրականության ոսկե ֆոնդում: Թվում է, թե գործ ունենք ոչ թե ուշ միջնադարի, այլ նոր ժամանակների ստեղծագործությունների հետ: Այդ երևույթը պայմանավորված էր մի կողմից բանաստեղծի անհատականությամբ, իսկ մյուս կողմից՝ քաղաքային այն միջավայրով, որի մեջ անցավ նրա կյանքը՝ հայրենի Շոռթից ու Ագուլիսից մինչև Թավրիզ և Թիֆլիս, գուցե՝ «Փռանգատան» ու «Հռոմանց տուն»¹:

Հայ միջնադարյան գրականության մեծագույն գիտակ ու համակարգող Մ. Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմության» մեջ Գրիգոր Տղային հատկացրել է ընդամենը կես էջ²: Մնացականյանը ոչ միայն հրատարակել է Գրիգոր Տղայի ստեղծագործությունների քննական բնագրերը, այլև դրանց կցել է շատ ծավալուն, փաստահարուստ տեսական, վերլուծական, պատմական հետազոտություն, որը ելակետային է միջնադարյան հայ մատենագրության այդ շրջանն ուսումնասիրողների համար: Գրիգոր Տղան Ներսես Շնորհալու եղբայր Վասիլի որդին էր, ու 1173–1193 թթ. եղել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա հովանավորել է իր ժամանակի նշանավոր մտավորականներին՝ Մխիթար Գոշին, Մխիթար Հերացուն, Սամվել Անեցուն: Հակադրվել է ոչ միայն Բյուզանդիայի միաբարարական շարժմանը, այլև ըմբոստ ձևով ընդդիմացել է մահմեդականների բռնություններին ու մերժել նրանց հավատը: Մնացականյանը մանրամասնում է, թե ինչ իմաստուն գործելակերպով Գրիգոր Տղան

¹ Ն աղ աշ Հ ով ն աթ ա ն. Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 7:

² Տե՛ս Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 129–130:

«մեծ թափ է հաղորդել Կիլիկյան Հայաստանի գրավոր դպրության զարգացման գործին»³:

Մնացականյանը համոզիչ փաստերով ապացուցում է, որ XIII դ. ըմբոստ բանաստեղծ, աշխարհիկ անձնավորություն Յրիկն ազդվել է Գրիգոր Տղայի քնարերգությունից՝ նրանից քաղելով նույնանման մտքեր՝ նույն տաղաչափությամբ ու հանգով: Գրիգոր Տղան ծանոթ է եղել իր ժամանակի հունական, ասորական, խալդական գրականություններին⁴: Գիտնականի եզրահանգումը, կապված այս բանաստեղծի դերի հետ, միանգամայն համոզիչ է. «Գրիգոր Տղան նախապատրաստեց այն սերնդի երևան գալը, որի առաջամարտիկներն էին Հովհաննես Երզնկացին, Յրիկը, Կոստանդին Երզնկացին և ուրիշներ: Ուստի և այդ սերունդը՝ ընդհուպ մինչև Նաղաշ Հովնաթանը, սիրեց Գրիգոր Տղային և օգտվեց նրա թողած ժառանգությունից»⁵:

Մնացականյանը հայ բանագիտությունը հարստացրեց «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» հարուստ ժողովածուով: Նա Մատենադարանի ձեռագիր դանձարանից քաղեց հայտնի ու ավելի չատ անհայտ ժողովրդական հյուսվածքներ և հրատարակեց դրանց քննական բնագրերը: Գրքում զետեղված են բանահյուսական նույն գործի տարբեր պատումներ՝ դուրս բերված տարբեր դարերի գրչագիր մատյաններից: Գիրքն իսկական ուղեցույց է ապագա բանագետների համար: Բանասերը մատնանշում է ժողովրդական հյուսվածքների գրավչությունը բոլոր ժամանակների համար. «Հենց այդ բարձր արվեստի ու առանձնահատկությունների շնորհիվ է, որ նրանք, անկախ անբարենպաստ պայմաններից և իրենց դեմ կազմակերպված հալածանքներից, պահպանվել են ոչ միայն միջնադարում, այլև հաճախ թևակոխել են նոր ժամանակներ»⁶:

1980 թ. է լույս տեսել գիտնականի «Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.)» գիրքը, որը բանագիտական-բանասիրական խոշոր արժեք ունի: Նա հետախուզել է հայ գրչագիր մատյաններն ու մասնագետներին ի ցույց դրել, թե որ դարերում և ուրքեր են հայ միջնադարում գրել հանելուկներ ու տարածել գրական այդ սիրված տեսակը: Ժանրի վաղնջական լինելը և նրա ընթացքը մինչև XVIII դ. գիտականորեն ու փաստացի մեկնաբանված է: Բանասերը հիմնավորում է, թե հայ գրականության մեջ հանելուկը եղել է դեռևս Ոսկեդարում⁷:

1995-ին ակադեմիկոս Ս. Արևշատյանի՝ Մատենադարանի տնօրենի ջանքերով լույս տեսավ Մնացականյանի «Հայրեններ» կոթողային աշխատությունը: Այն լույս է տեսել հետմահու: Այս աշխատությամբ Մնացականյանը փակում է այն բանավեճը, որը ծագել էր Նահապետ Քուչակի անվան շուրջ՝ այդ բանաստեղծ-աշուղին համարելով XVI դարի հայ երգիչ, որը, սակայն, տարբեր

³ Գրիգոր Տղա. Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրություններ Մ. Ծ. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 30:

⁴ Նույն տեղում, էջ 145:

⁵ Նույն տեղում, էջ 174–175:

⁶ Ա. Մնացականյան. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 81:

⁷ Ա. Ծ. Մնացականյան. Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երևան, 1980, էջ 37:

դարերում ստեղծված հայրենների հեղինակը չէ։ Այդ խնդրին Մնացականյանից առաջ հայրեններին անդրադարձել էին այնպիսի նշանավոր հայագետներ, ինչպիսիք էին Ա. Չոպանյանն ու Մ. Աբեղյանը։

Մնացականյանը բողոքովին նոր փաստերով հիմնավորում է այդ երկուսի իրավացի լինելը։ Ավելին, 1970 թ. «Լույս» հրատարակչությունը Հայաստանի դպրոցների VIII դասարանների համար հրատարակեց մի հրաշալի «Հայ գրականության քրեատոմատիա», որը կազմել էր Ա. Մնացականյանը։ Նա այդ քրեատոմատիայում հայրենների մի գեղեցիկ փունջ ներկայացրել էր որպես հայ ժողովրդական բանահյուսության գոհարներ, իսկ Նահապետ Քուչակից դրել էր «Տաղ ի վերայ Մոսկովու թագաւորին» քերթվածը։ Վերջինս ավարտվում էր հետևյալ փաստերով.

Ես Քուչաքս եմ Վանեցի,
Ի գեղէն խառակոնիսայ.
Լցեր եմ հարիւր տարին,
Էլ չի գար մտքիկս ի վերայ,
Ով ինձ ողորմի ասի,
Ողջ կենայ իւր կենաց վերայ⁸։

Մնացականյանը ձեռագրական հարուստ ու հավաստի փաստերով ներկայացնում է Նահապետ Քուչակին վերագրվող և նրա անվամբ հրատարակված հայրենների շերտերը՝ ա) ժողովրդական հայրեններ, բ) գուսանական հայրեններ, գ) անհատական հայրեններ։ Նա մատնացույց է անում, թե հայրենների բուն հայկական տաղաչափությունն առկա է դեռևս X դարից՝ Գրիգոր Նարեկացուց։

«Հայրեններ» գիրքն ունի գիտական ծանոթագրություններ, անհրաժեշտ աղյուսակներ, բառարան։ Սա իսկական մի գանձարան է, որ Մնացականյանի երկար տարիների աշխատանքի արդյունքն է։

Հայագետի մյուս կոթողային աշխատությունը «Հայկական զարդարվեստ» աշխատությունն է, որը բողոքովին նորություն է հայագիտության մեջ։ Այն ստեղծված է հայ հեթանոսական շրջանի և քրիստոնեական ժամանակների զարդարվեստի՝ մեզ հասած նմուշների քաջիմացությամբ։ Մնացականյանը մեծապես օգտվել է օտարազգի ու հայ նշանավոր գիտնականների՝ իր հետագոտությունն առնչվող ուսումնասիրություններից։ Դրանք են՝ Ն. Մառը, Վ. Ստասովը, Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Գր. Ղափանցյանը, Գ. Լևոնյանը, Բ. Պրոտրովսկին, Լ. Դուրնովոն, Ն. Տոկարսկին, Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆաղարյանը, Ա. Սվիրինը, Ռ. Դրամբյանը և ուրիշներ¹⁰։ Գրքում փաստացի նկարներով և դրանց կցված մեկնություններով ներկայացված են հայկական զարդ-

⁸ Հայ գրականության քրեատոմատիա, միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար, կազմեց Ա. Շ. Մնացականյանը, Երևան, 1970, էջ 178։

⁹ Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 16։

¹⁰ Ա. Մնացականյան. Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ VIII։

արվեստի հիմնական մոտիվների ծագման և զարգացման բովանդակության հարցերը: Չափազանց հետաքրքիր է հետազոտության առաջին գլխում մեկնաբանվող թեման՝ «Ծաղիկները և վարսանդա-պտղային օրգանները զարդարվեստում»:

Մնացականյանի գրքից պարզ է դառնում, որ կենաց ծառը վաղնջական ժամանակներից հայ զարդարվեստում երևան է եկել ամենատարբեր դրսևորումներով, և դրանք բոլորը կապվում են պտղաբերության ու կյանքի շարունակական հարատևության գաղափարի հետ:

Հին աշխարհից հայտնի է, որ կյանքի հիմքում ընկած են չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, արևը: Այդ տարրերի պատկերը գիտնականը նկարներով ու համապատասխան բացատրություններով մատնացույց է անում Դվինի պեղումներից հայտնաբերված ճարտարապետական կառույցների մնացորդների վրա¹¹:

Չորս տարրերի իրողությունը զբաղեցրել է նաև Բարձր Վերածննդի մտածողներին ու արվեստագետներին: Այսօր Լոնդոնի Ազգային պատկերասրահում չորս հսկայական դահլիճներն իրարից բաժանող միջանցքի չորս պատերին դրված են այդ չորս տարրերը խորհրդանշող հսկայական կտավները:

Համայն մարդկության մշակույթում առկա են ոչ միայն կենաց ծառի, այլև կենաց հեղուկի խորհրդանշանները: Հայկական ավանդույթում կենաց հեղուկը կապվել է համաափյուռի հետ. «Այդ սրբազան բույսը համարվում է բոլոր բույսերի թագավորը, նա է բոլորին իմաստ և նշանակություն տալիս: Այդպիսին է և համաափյուռը ... ի վիճակի է հրաշքներ գործել, նրա միջոցով մարդիկ կարող են ծովի վրայով գնալ, իմաստություն, ուժ, առողջություն ձեռք բերել և այլն»¹²:

Մնացականյանն անդրադառնում է նաև Հայկական զարդարվեստում կենդանակերպի նշանների պատկերվելու երևույթին, որը սերտորեն կապված է եղել աստղագուշակության ու մարդկային ճակատագրերը որոշելու հետ: Այդ երևույթների դեմ պայքարել են Եզնիկ Կողբացին, Անանիա Շիրակացին՝ ելնելով քրիստոնեական աստվածաբանության դիրքերից:

Գիտնականը ուշադրալ փաստերով ներկայացնում է Հայկական զարդարվեստի ու Հայ ժողովրդական բանահյուսության մեջ եղած սերտ կապը:

Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» գիրքն անգլերեն թարգմանվելու դեպքում մեծ ընդունելություն կգտնի գիտական աշխարհում. այն ժամանակային սահմանափակում չունի:

1966 թ. լույս է տեսել «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» գիտական անհերքելի փաստերով շարադրված աշխատությունը, որը 1969 թ. թարգմանաբար լույս տեսավ նաև ռուսերեն: Գիրքն ուղղված էր աղբյուրներից այն գիտնականներին, հատկապես՝ Զիա Բունիաթովին, որոնք ամեն հայկականը վերագրում էին իրենց ու նենգափոխում իրական պատմությունը: Մնացականյանը փաստերով ապացուցում է, որ Քրիստոսի ծնունդից հետո IV դարի վերջին, երբ հայկական պետականությունը թուլացել էր, բունի ձևով Հայաստանից անջատել են նրա արևելյան գավառները և տվել Աղ-

¹¹ Նույն տեղում, էջ 143:

¹² Նույն տեղում, էջ 485:

վանքին¹³: Թեպետ Մաշտոցը գրեր էր ստեղծել Աղվանքի համար, սակայն Աղվանքի պետական լեզուն և պետական գիրը եղել է հայերենը¹⁴: Աղվանքի թագավորները հայեր էին՝ հայ Բագրատունի նախարարական տնից, իսկ Համամ Արևելցու ժամանակ և հետո IX–XII դարերում, Աղվանքի թագավորությունը համարվել է հայկական նաև օտարների կողմից¹⁵: Արցախի արքա հայազգի Վաչագան Բարեպաշտի (V դարի վերջ– VI դարի սկիզբ) գերեզմանաքարի վրայի արձանագրությունը հայերեն է¹⁶:

Հայրենասեր գիտնականն անսահման երջանիկ էր, երբ առաջին անգամ նշվեց էրեբունի–Երևան տոնը: Նա ասում էր, որ երբեք Հայաստանն այսքան չքեղ մայրաքաղաք չի ունեցել, ու հայ ժողովուրդն այդքան խաղաղ և երջանիկ չի եղել, ինչպես ինքն այդ օրը տեսել է իր կնոջ տիկին Մարգարի հետ: Զմոռանա՛նք, որ նրա հայրը չարագուշակ 1937 թ. անմեղ բռնադատվածներից էր:

Մնացականյանը շատ էր տպավորվել Գր. Խանջյանի «Վարդանանք» նկարից, որը «Հայոց այբուբենի» հետ ցուցադրվում էր Երևանի Նկարիչների տանը:

1982 թ. «Սովետական գրող» հրատարակչությունը A-4 թղթի ծավալով, գունավոր ու չքեղ հրատարակեց Գր. Խանջյանի «Վարդանանք» նկարի 8 բացիկներից բաղկացած հավաքածուն, որի սկզբում դրված էր նկարը բացատրող Ա. Մնացականյանի խիստ ներգործող առաջաբանը: Այդ հոդու ու ազատատենչ նկարում Ավարայրի հերոսամարտիկների դեմքերը նկարիչը իմաստուն ձևով պատկերել էր մեր ազգային-ազատագրական դարավոր պայքարի առաջամարտիկ հերոսների ու մտավորականների իրական դեմքերով:

Իր նախաբանում Մնացականյանը գրում է. «Զինվորյալ են Հայոց մտքի ու ոգու բոլոր ժամանակների Մեծերը, գոյատևման ու հայապահպանության բոլոր զինապարտները՝ եղեգնածին Վահագնից մինչև Կոմիտաս ու Վարուժան, Եղիշե Զարենց ու Պարույր Սևակ: ... Գրիգոր Խանջյանն ամբողջ խորք ու լայնքով է ընկալել ու արտահայտել Վարդանանց գոյամարտի կենսափրկի-սոփայությունը. այն իր գույտ ազգային կերտվածքով հնչում է իբրև համամարդկային ազատասիրության համանվագ ու հիմն, ասք ու առասպել»¹⁷:

Մնացականյանի հիշատակի խոսքը թերի կլինի, եթե նա չներկայացվի նաև որպես բանաստեղծ: Նա ՍՍՀՄ գրողների միության անդամ էր 1940 թ. և իր բանաստեղծությունները ստորագրում էր Ասատուր Շեմս ձևով: Ի հիշատակ իր պաշտելի հոր՝ նա Շմավոն անունը դարձրել էր Շեմս: Պարսկերեն Շեմս նշանակում է արև: Տպագրել է երեք բանաստեղծական ժողովածուներ՝ «Հանցանք» (1939 թ.), «Պատերազմ և հայրենիք» (1942 թ.), «Բանաստեղծություններ» (1947 թ.): Հետագայում բանաստեղծություններ գրում էր իր համար: 1973 թ., երբ «Արարատ» ֆուտբոլային թիմը կրկնակի չեմպիոնի մրցանակներ

¹³ А. III. М н а ц а к а н я н. О литературе Кавказской Албании. Ереван, 1969, с. 190.

¹⁴ Նույն տեղում, էջ 191:

¹⁵ Նույն տեղում, էջ 192:

¹⁶ Նույն տեղում, էջ 194:

¹⁷ Գ. Խ ա ն Ջ յ ա ն. Վարդանանք, Երևան, 1982, էջ 1–2:

չահեց՝ ԽՍՀՄ-ի ֆուտբոլային թիմերի միջև գրավելով առաջին տեղը, նաև՝ գավաթը, Մնացականյանը գրեց մի ոգեշունչ ոտանավոր, որն արտասանում էին Մատենադարանի գրեթե բոլոր աշխատողները։ Նույն ձևով նա գրեց Տիգրան Պետրոսյանի չախմատի գծով աշխարհի չեմպիոն դառնալու առիթով։

1997 թ., երբ մեծ հայագետն այլևս կենդանի չէր, հրատարակվեց նրա հեղինակած «Գիրք գրված փշալարերի ճանկերում» արձակ ու չափածո գործերի ժողովածուն, որը հիացմունք է պատճառում մարդասիրական և հայրենասիրական գաղափարներով։

Մնացականյանը տեսել է ֆաշիզմի դաժան դեմքը, հրաշքով փրկվել ֆաշիստական ճամբարի ցրտից, սովից, հիվանդություններից։ Սակայն իր կյանքի՝ այդ ամենատառապալի օրերին երազում է սիրելի Երևանի մասին. «Երևանը օտար հողերի վրա «կռունկ, ուստի՞ կուգաս ... » երգողների և հայկական մրմունջներ տարածողների համար ամպի մի ճերմակ քուլա է՝ բազմած Մասի երկնահոսկ կատարին ...: Երևանը դեղահաբ է ինձ համար, մի փոքրիկ ու ամենազոր հաբ, առանց որի շուտով կմահանամ ես»¹⁸։ Սա գրվել է ֆաշիստական ճամբարում, ուր 1943 թ. մարտի 20-ին «Ցանկություն» բանաստեղծության մեջ նա ուզում է կանխել պատերազմի վտանգը իր երկրի համար, որպեսզի այնտեղ ոչ մի ական չպայթի։

Իմ սրտում պայթիր, որպեսզի հանկարծ
Չպայթես կտրին ձեռագրատան.
Եվ ո՛չ մի, ո՛չ մի, ո՛չ մի դաժան կայծ
Չհուզե անդորրն այդ վեհ սրբության¹⁹։

Մնացականյանն ընկերասեր էր, հյուրասեր, կենսասեր։ Նա անսահման նվիրված էր իր մտավորական ընկերներին՝ հատկապես նրանց, որոնք նվիրյալ գիտնականներ էին ու հայրենասերներ։ Դրանք շատ էին։

Թույլ եմ տալիս ինձ մի փոքրիկ դրվագ դնել հիշատակի այս խոսքիս վերջում։ Ես Մնացականյանի վերջին ասպիրանտն էի, որովհետև ինձնից հետո կար մեկը, որն աշխատասեր չէր ու այդպես էլ չպաշտպանեց։ Նա որոշեց, որ այլևս ասպիրանտ չի դեկավարելու։ Երբ դեկավարիս տարել էի թեկնածուական ատենախոսության պատրաստի տարբերակը, նա գոհունակությամբ վերադարձրեց այն։ Տանը, երբ բացեցի արդեն կազմված ատենախոսությունը, տեսա, որ դրա մեջ դրել էր շատ գեղեցիկ այս բանաստեղծությունը, որը թող գարդարի նրա խնկելի հիշատակը։

Ես մի մատուռ վաղճեց լքված,
Խորանս անտեր, դուռս անփական,
Գմբեթս հին, խաչս թեքված,
Այցելուներ պատահական։

¹⁸ Ա. Մնացականյան. Գիրք գրված փշալարերի ճանկերում, Երևան, 1997, էջ 14։

¹⁹ Նույն տեղում, էջ 148։

Դու որտեղի՞ց հարկս մտար,
Նորոգեցիր հիմաց ի վեր,
Հալածեցիր խորթն ու օտար
Եվ իշխեցիր՝ բացած թևեր:

Պատարագ է արդ հոգուս մեջ,
Ամենայն ժամ՝ բուրում խնկի,
Զանգի զողանջ, մոմեր անշեջ,
Ինքս քո դեմ իջած ծունկի ...

Ինքս քո դեմ. դու՝ Տիրամայր,
Ես՝ Տիրամոր անվան մատուռ.
Քե՛զ է ձոնված ամեն կամար,
Քեզնով օծված՝ խոյակ ու դուռ:

Բայց, ա՛խ, եթե լուե քո ձայն,
Ու հեռանաս ... Աստված չանի.
Կավերակվեմ հիմնակործան,
Կվերածվեմ գերեզմանի ...

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ